

«ՎՐԱՍՏԱՆԸ» 100 ՏԱՐԵԿԱՆ Է

ԲԱՐԵՄԱՂԹԱՆՔՆԵՐ՝ 100-ԱՄՅԱ ԹԵՐԹԻՆ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

Նշանակալից է նաև «Վրաստան» թերթի դերը վրաց եւ հայ ժողովուրդների ավանդական բարեկամության է՛լ ավելի խորացման գործում: Թերթի նշանակությունն է՛լ ավելի նկատելի ու գնահատելի դարձավ Վրաստանի եւ Հայաստանի պետական անկախության հռչակումից հետո՝ երկու երկրների միջեւ ձեւակերպվող միջպետական հարաբերությունների ամրացման ու խորացման գործընթացում:

«Արդյունաբերությունը կփրկի Վրաստանը» կուսակցության հիմնադիր Գոգի Թոփաձեի, ինչպես նաև իմ համոզմամբ, թերթի նման հաջողությունը եւ պարբերականի այսօր վաստակած վստահությունը թերթի գլխավոր խմբագիր պարոն Վան

Բայբերյանի մեծ ծառայության արգասիքն է, ով շուրջ 30 տարի գլխավորում է թերթի խմբագրությունը: Նրա արհեստավարժության ու քաղաքական կողմնորոշման հստակ կուրսի շնորհիվ՝ թերթը շարունակում է հավատարմորեն ծառայել դեռևս 100 տարի առաջ ստանձնած պատմական առաքելության դրույթներին:

Շնորհավորում եմ գլխավոր խմբագրին, «Վրաստան» թերթի խմբագրության բոլոր աշխատակիցներին հորելյանի առթիվ, մաղթում է՛լ ավելի ստեղծագործական առաջընթաց, երկրի նկատմամբ սիրո պահակադիրքում երկարակեցություն եւ բազում հավատարիմ ընթերցողներ:

ՋՈՒՐԱԲ ՏՂԵՄԱԼԱՉԵ

«Արդյունաբերությունը կփրկի Վրաստանը» կուսակցության նախագահ

ՇՆՈՐՀԱՎՈՐՈՒՄ ԵՆՔ ԾՆՈՒՆԴՊ, ՎԱՍՏԱԿԱՇԱՏ «ՎՐԱՍՏԱՆ»

(Սկիզբը՝ 1-ին էջում)

«Վրաստան»-ը իր ուշադրության կենտրոնում է պահել հանրապետության վերահայտարարող հուզող հարցերը, հաղորդակից դարձրել նրան երկրում կատարվող անցուղարձին, նպաստել հայ-վրաց ազգային ընդհանրության ձեւավորմանը:

Թերթն իր խմբագրակազմով, գլխավորությամբ՝ եռանդուն խմբագիր պարոն Վան Բայբերյանի, իր մասնագիտական կարողություններով ջանք չի խնայում պահպանելու ավանդական նվաճումները, հավատարիմ մնալու իր առջեւ դրված խնդիրներն իրագործելու առաքելությանը:

Չեմ կարող չափելացնել, որ երբ տո-

ղերիս հեղինակը պարբերաբար փորձել է իր թղթակցություններով մասնակից դառնալ թերթի աշխատանքներին, չի մերժվել խմբագրությունից: Այդ առնչությամբ հայտնում եմ իմ շնորհակալությունը՝ խմբագրակազմին ցանկանալ քաջառողջություն, նորանոր հաջողություններ: Հուսանք, որ Ջավախքի եւ հանրապետության ողջ վերահայտարարող երիտասարդ թղթակիցները հատուկ հոգատարություն կցուցաբերեն թերթի խմբագրակազմի նկատմամբ եւ իրենց օպերատիվ թղթակցություններով կնպաստեն թերթի առավել արդյունավետ աշխատելու ձգտումներին:

ՎԱՉԱՎԱՆ ՈՍՏԱԿԱՅԱՆ

«Վրաստան» թերթի վետերան ընթերցող ք.Ախալքալաքի

ԳՐԱՂՈՐԱԿ

ՅՈՒՐԻ ՍԻՄՈՆՅԱՆ. «ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍՆԱԿԻՑՆ ՈՒ ԱԿԱՆԱՏԵՍՆ ԵՄ ԵՂԵԼ»

Վերջերս երևանում լույս տեսան ռուսական «Նեգավիսիմայա գազետա» թերթի լրագրող Յուրի Սիմոնյանի երկու ժողովածուները՝ «Թբիլիսյան պատմություններ» եւ «Քամու եւ ջրի պատմություններ»: Այդ գրքերը գրվել են տարբեր ժամանակներում եւ ներկայացվեցին այդ աշխատությունների վերամշակված, լրացված տարբերակները:

Շատերը, հավանաբար, չգիտեն, որ Յուրի Սիմոնյանը թբիլիսցի է, ծնվել ու մեծացել է Թբիլիսիում, սովորել է Թբիլիսիի միջնակարգ դպրոցում, բարձրագույն ուսումնական հաստատությունում՝ ավարտել է Վրաստանի պոլիտեխնիկական ինստիտուտը: Ի վերջո, ընտրել է լրագրողի մասնագիտությունը, մեծ ճանապարհ է անցել՝ «Մոլոդոյոժ Գորոզի» թերթի թղթակցից մինչեւ ռուսական «Նեգավիսիմայա գազետայի» քաղաքական վերլուծաբան:

«Քամու եւ ջրի պատմություններում» մի քանի ժողովածուներով՝ «Վեստերնի ոճով», «Ընտրյալների պատմություններ», «Լիալուսնի պատմություններ» եւ «Ծիածանի պատմություններ», սրված են հնարավորի պատմություններ եւ հերոսներ: Բոլոր պատմություններն էլ գրավիչ են, ընթերցելի, իսկ «Լիալուսնի պատմություններ» ժողովածուն իրենից ներկայացնում է երեխաներին քնելուց առաջ հանգստացնող եւ տարիներ անց հեղինակի կողմից վերամշակված աշխատություն՝ որոշակի ուղղումներով եւ փոփոխություններով: Ժողովածուում ներկայացված պատմություններն ինքնակենսագրական չեն, թեեւ դրանցում ներկայացված առանձին արկածախնդրություններում ինքը՝ հեղինակը ժամանակին մասնակցել է: Ինչ վերաբերում է երկրորդ՝ «Թբիլիսյան պատմություններ» ժողովածուին, ապա, հեղինակն այն նվիրել է թբիլիսցիներին, իր համաքաղաքացիներին, ում հետ շատ մեծ կապվածություն է ունեցել սկսած մանկության օրերից: Ժողովածուում ընդգրկված են «Թբիլիսցիի Ռոդոսում», «Վիկինգ», «Սարեցի», «Մեհամարտ», «Միջադեպ հացի հրապարակում» եւ այլ պատմություններ, որոնք հիմնականում գրված են իրոք տեղի ունեցած իրադարձությունների մասին:

Յուրի Սիմոնյանը փորձել է ներկայացնել հին Թբիլիսիի բնակիչների, երկրի պատմական թաղամասի ոգին՝ քաղաքի, որտեղ բնակիչների, անկախ կրոնական եւ ազգային պատկանելության, գլխավոր նշանակություն



նը թբիլիսցուն յուրահատուկ մարդկային պատմությունների դրսեւորումն է: Կարծում եմ, հեղինակը հաջողությամբ է հասել առաջադրած նպատակին:

«Բնականաբար, Թբիլիսիում շատ բան է փոխվել, շատ բան վերացել, շատերը, ում ճանաչում էի, այսօր արդեն չկան,- ասաց Յուրի Սեչիտովը: - Սակայն ցանկանում եմ ընդգծել, որ գոյություն ունեն ժառանգաբար սերնդետեղանի փոխանցվող ավանդույթներ եւ կենսաձեւեր: Հին Թբիլիսիի մթնոլորտն ու ավանդույթներն այսօր դեռևս ապրում են Հավլաբարում, Մեյդանում, Սոլոլակիում եւ մայրաքաղաքի մյուս պատմական թաղամասերում: Իմ թբիլիսյան պատմությունները ներկայացնում են 50-ամյա վաղեմության իրադարձությունները, որոնց վկան ու ակնատեսն եմ եղել: Մի քանի պատմություններում ներկայացրել եմ նաեւ 90-ական թվականների իրադարձությունները...»:

Ռուսական եւ հայկական մանուկում արդեն տպագրվել են գրական գրախոսություններ, որոնց հեղինակներն են գրականագետ Իլոնա Չնեվաձեյն, լրագրող եւ գրող Աշոտ Գազաջանը, վերլուծաբան Վիկտոր Գարանկինը, գրող եւ լրագրող Արմեն Խանբաբյանը եւ ուրիշներ:

Համոզված եմ, որ Յուրի Սիմոնյանի գրքերը մեծ ուրախությամբ կընթերցվեն երեւանում, Թբիլիսիում, Մոսկվայում: Հավանաբար նաեւ՝ այլ վայրերում, որտեղ տիրապետում են ռուսերենին: Եվ ոչ միայն նրա համար, որ գրքերը յուրահատուկ են, հետաքրքիր ու գրավիչ բովանդակությամբ, այլեւ նրա համար, որ դրանցում շատերը, հանձինս այդ պատմությունների, քերում ու բարի հերոսներ ճանաչեն իրենց:

ՍԻՄՈՆ ԿԻԼԱՉԵ

ՀՐԱՏԱՊ

ԻՆՉՊԵՍ ԿԱՐԵԼԻ Է ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼ ԿԱՄ ՊԱՇՊԱՆԵԼ ՔԱՂԱՔԱԳԻՈՒԹՅՈՒՆԸ

«Վրաստանը» իր էջերում մեկ անգամ չէ, որ անդրադարձել է Վրաստանի քաղաքացիության վերականգնման, ստացման, պահպանման հարցերին:

Չնայած դրան, խմբագրության փոստով շարունակվում է նամակների հոսքը, որոնցում ընթերցողները կրկին դիմում են քաղաքացիության հարցում առավել մանրամասն տեղեկատվության ներկայացման խնդրանքով: Թերթն ընդառաջելով ընթերցողների ցանկությանը, դիմեց Վրաստանի արդարադատության նախարարության պետական սպասարկումների զարգացման գործակալությանը՝ Վրաստանի քաղաքացիության վերականգնման եւ պահպանման կանոնների պարզաբանման խնդրանքով:

Ինչպես ասացին գործակալությունում, Վրաստանի նախագահ Սալոմե Ջուրաբիշվիլին ստորագրել է «Վրաստանի քաղաքացիության մասին» օրենքի փոփոխությունները, ըստ որի՝ Վրաստանի քաղաքացիության վերականգնման եւ պահպանման ժամկետները երկարաձգվել են մինչեւ 2022 թվականի դեկտեմբերի 31-ը: Նաեւ մինչեւ հաջորդ տարվա վերջը քաղաքացիության հետ կապված հարցերը կարող են կարգավորել նաեւ նրանք, ովքեր ծնվել են մինչեւ 1993 թվականը եւ չեն ստացել ոչ մի երկրի քաղաքացիություն:

Գործակալությունից ստացված պարզաբանումների համաձայն, Վրաստանի քաղաքացիությունը պահպանվում է այն դեպքում, եթե քաղաքացին, մինչեւ այլ երկրի քաղաքացիության ստանալը, պետությունից ստանում է Վրաստանի քաղաքացիության պահպանման համաձայնությունը: Քաղաքացիության պահպանումը ուժի մեջ է մնում նաեւ, եթե անձը այլ երկրի քաղաքացի է, սակայն, ում Վրաստանի քաղաքացիության կարգավիճակը դեռեւս չի դադարեցվել՝ այդ դեպքում նա հնարավորություն ունի մինչեւ 2022 թվականի դեկտեմբերի 31-ը Վրաստանի քաղաքացիության պահպանման խնդրանքով դիմել պետական սպասարկումների զարգացման գործակալությանը:

Ինչ վերաբերում է Վրաստանի քաղաքացիության վերականգնմանը, ապա, եթե քաղաքացին կորցրել է Վրաստանի քաղաքացիությունն այլ երկրի քաղաքացիության վերականգնման համար նա մինչեւ 2022 թվականի դեկտեմբերի 31-ը Վրաստանի քաղաքացիության վերականգնման խնդրանքով պետք է դիմի պետական սպասարկում-



ների գործակալությանը: Ընդ որում, քաղաքացիության վերականգնման համար նա անցնելու է վրաց լեզվով համապատասխան թեստավորում:

Ինչպես նշեցին Պետական սպասարկումների զարգացման գործակալությունում, օրենքի փոփոխությունների համաձայն, անչափահաս սպառնալուծությունների վերականգնումը հնարավոր է այն դեպքում, եթե ծնողը վերականգնում է Վրաստանի քաղաքացիությունը:

Գործակալությունում նշեցին նաեւ, որ Վրաստանի քաղաքացիությունը շնորհվում է նաեւ հատուկ կարգով, եթե անձը ծնվել է Վրաստանում, սակայն Վրաստանի քաղաքացիությունը չի հաստատվել: Հատուկ կարգով Վրաստանի քաղաքացիություն ստանալու համար անձը խնդրանքով դիմելու է պետական սպասարկումների զարգացման գործակալությանը: Այդ դեպքում եւս քաղաքացին անցնելու է վրաց լեզվի, ինչպես նաեւ Վրաստանի պատմության եւ հիմնական օրենքների իմացության թեստավորում:

Գործակալության պարզաբանմամբ, Վրաստանի քաղաքացիությունը հաստատվում է այն անձանց համար, ովքեր ծնվել են 19975 թվականի մարտի 31-ից մինչեւ 1993 թվականի մարտի 31-ը, հինգ տարի ապրել են Վրաստանի տարածքում եւ այլ երկրի քաղաքացիություն չունեն:

Վրաստանի քաղաքացիությունը հաստատվում է նաեւ այն անձանց համար, ովքեր ծնվել են Վրաստանի տարածքում, երկրից հեռացել են 1991 թվականի դեկտեմբերի 21-ից հետո եւ չեն ստացել այլ երկրի քաղաքացիություն:

Գործակալությունում նաեւ տեղեկացրին, որ միայն 2020 թվականին Վրաստանի քաղաքացիության պահպանման վերականգնման եւ հատուկ կարգով Վրաստանի քաղաքացիության շնորհման ու քաղաքացիության հաստատման խնդրանքով պետական սպասարկումների գործակալությանը դիմել է 7123 քաղաքացի:

ՅՈՒՐԻ ՍԻՄՈՆՅԱՆ

COVID - 19

ՎՐԱՍՏԱՆՈՒՄ ԼԻՈՒԻՆ ՊԱՏՎԱՍՏՎԵԼ Ե ԶՎՓԱՐԱՍ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ 23,1 ՏՈՒՆՈՍ



Վրաստանի Հիվանդությունների վերահսկման ու հանրային առողջապահության ազգային կենտրոնի տեղեկատվության, սեպտեմբերի 17-ի տվյալներով, ընդհանուր առմամբ, Վրաստանում կատարվել է 1 589 024 պատվաստում:

Լիովին պատվաստված է չափահաս բնակչության 23,1 տոկոսը (660 832 մարդ), իսկ պատվաստանյութի մեկ չափաբաժնով՝ 32,5 տոկոսը (928 192 մարդ):

Հիվանդությունների վերահսկման ազգային կենտրոնի ղեկավար Ամիրան Գամդրելիձեի խոսքով՝ պատվաստումների ազգային պլանի իրականացման համար ցանկալի է օրական պատվաստումների մակարդակը հասցնել 30 հազարի: Ըստ Ամիրան Գամդրելիձեի, պատվաստումների նկատմամբ քաղաքացիների տրամադրվածության փոփոխման նպատակով սկսվել են խրախուսական տարբեր միջոցառումներ, այդ թվում՝ վիճակախաղ:

ԵԿԱՏԵՐԻՆԵ ՏԻՎԱՐԱԶԵ. «ՀԱՄԱՃԱՐԱԿԱՅԻՆ ԻՐԱՎԻՃԱԿԸ ԿԱՅՈՒՆ Ե, ՊԱՏՎԱՍՏՈՒՄՆԵՐԻ ՏԵՄՊԵՐԸ ՏԱՐԱՇԱՆՐՉԱՆՆԵՐՈՒՄ ԴԵՌԵՎՍ ԲԱՎԱՐԱՐ ԳԵՆ»

(Սկիզբը՝ 1-ին էջում) - Պատվաստման տեմպերը ողջ Վրաստանում գոհացուցիչ են: Այս առումով առաջատար են Թբիլիսին ու Աջարիան, սակայն տարածաշրջաններում, միջինը, պատվաստված է բնակչության 11 տոկոսը: Սա այնքան էլ լավ չէ, - հայտարարեց Եկատերինե Տիկարաձեն եւ հավելեց, որ գործընթացն ակտիվացնելու համար կարելի է բնակչության հետ շփումը, գյուղական բժիշկների ակտիվացումը: Այս պահին հիվանդության ռիսկային խմբերն են 60-ից բարձր քաղաքացիները եւ քրոնիկ հիվանդություններ ունեցողները, հատկապես կարելի է նրանց պատվաստումը, քանի որ նրանց վարակվելու ռիսկը մնում անհրաժեշտ է կլինիկա եւ վերակենդանացում:

Նրա խոսքով, կենսաթոշակառուների շրջանում պատվաստումների մակարդակը բավական ցածր է, ուստի նախատեսվում է ակտիվացնել տեղեկատվական միջոցառումները: - Մենք կքննարկենք մի քանի մեթոդներ: Մեզ համար կարևոր է ընտանիքի բժիշկների ներգրավումը այս գործընթացին: Կարևոր իրադարձություններից մեկը մեր ենթադրությամբ այն է, որ 60-ից բարձր քաղաքացիների համար կարող է դժվար լինել գրանցվելը, տեղափոխվելը, տեղեկատվության հասանելիությունը եւ այլն: Առաջին եւ ամենակարևոր գործունեությունը կլինի ընտանիքի բժիշկը, որն իր թաղամասում հրահանգ կտա անցկացնել կարևոր տեղեկատվական միջոցառումներ: Մեր հիմնական խնդիրն ու լծակն է՝ բարձրորակ տեղեկատվության տրամադրման արդյունքում քաղաքացիներին տրամադրել կամավոր պատվաստման: Առաջինը, շրջաններում ընտանեկան բժիշկների ակտիվացումն է, հաջորդը՝ ֆինանսների նախարարության հետ տարբեր ֆինանսական, խրախուսական միջոցառումների քննարկումները, որոնք կարող են մոտիվացիա լինել մեր թոշակառու քաղաքացիների համար: Սակայն, ոչ միայն այս, այլև շրջանային եւ մարզային մակարդակով մենք հաղորդակցություն ունենք պարզելու, թե ո՞ր տարածաշրջանում ո՞ր իրադարձությունը կարող է ավելի արդյունավետ լինել՝ ելնելով այդ անկյունի կարիքներից,- ընդգծեց Ամիրան Գամդրելիձեն: - Մենք ցանկանում ենք սեպտեմբերին ունենալ ոչ թե օրական 23 000 պատվաստում, այլ՝ 30.000-35 000: Այսօրվանից վիճակախաղը սկսվել է, եւ աշխատանքներ են տարվում տարբեր խրախուսելու համար: Հնարավոր է, որ խրախուսման այլ մեթոդներ ներդրվեն, որպեսզի օրական պատվաստումների մակարդակը հասնի 30.000-ի,- ասաց Ամիրան Գամդրելիձեն: Անդրադառնալով կենսաթոշակառուների պատվաստման թեմային, Ամիրան Գամդրելիձեն նշեց, որ ֆինանսների նախարարության հետ քննարկվում են տարբեր ֆինանսական, խրախուսական միջոցառումներ, որոնք կարող են խրախուսել կենսաթոշակի անցած քաղաքացիներին պատվաստումն անցնելու համար:

ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ ԵՆ ՏԱՐՎՈՒՄ ՏԱՐԵՑՆԵՐԻ ՊԱՏՎԱՍՏՈՒՄՆԵՐԸ ԽՐԱԽՈՒՄՆԵԼՈՒ ՀԱՍԱՐ

Հիվանդությունների վերահսկման ազգային կենտրոնի ղեկավարը նշեց, որ աշխատանքներ են տարվում տարբեր խրախուսման ուղղված միջոցառումների իրականացման, նրանց պատվաստման գործընթացում ներգրավելու համար:



ԱՅԿ-ի ներկայացուցիչները որբել մտահոգություն չեն հայտնել կորոնավիրուսի բուժման արձանագրության վերաբերյալ, որին հետևում են վրացական կլինիկաները, ասում են մասնագետները: Վերջին ժամանակներում սոցցանցերում Վրաստանի առողջապահական ոլորտը լայնորեն մեղադրվում է կորոնավիրուսով վարակված հիվանդներին ոչ ճիշտ բուժման մեջ՝ մատնացույց անելով մահացության ցուցանիշի զգալի աճը: Թբիլիսիի ինֆեկցիոն հիվանդանոցի Ցերցվածեն, սակայն, վստահ է, որ կորոնավիրուսի բուժման վրաստանյան մեթոդը եղել է ու կա աշխարհում լավագույններից մեկը, իսկ մահացության բարձր ցուցանիշը բացատրվում է վարակվածների չափազանց բարձր քանակով: - Ցավալի է կորցնել օրական 70-80 մարդ, սակայն պետք է հասկանալ, որ նրանք 70-80 հազար հիվանդներից են,- պարզաբանել է Ցերցվածեն: Վրաստանի կառավարության կողմից 2021 թվականի դեկտեմբերի 31-ին, իսկ մրցանակային գումարը կկազմի 100 000 լարի: Վիճակախաղի ընդհանուր մրցանակային ֆոնդը կազմում է 2 800 000 լարի: Վիճակախաղին կմասնակցեն մինչև 2021 թվականի սեպտեմբերի 13-ը պատվաստված քաղաքացիները, ինչպես նաև՝ 2021 թվականի սեպտեմբերի 13-ից հետո պատվաստված քաղաքացիները:

Վրաստանի կառավարության կողմից 2021 թվականի դեկտեմբերի 31-ին, իսկ մրցանակային գումարը կկազմի 100 000 լարի: Վիճակախաղի ընդհանուր մրցանակային ֆոնդը կազմում է 2 800 000 լարի: Վիճակախաղին կմասնակցեն մինչև 2021 թվականի սեպտեմբերի 13-ը պատվաստված քաղաքացիները, ինչպես նաև՝ 2021 թվականի սեպտեմբերի 13-ից հետո պատվաստված քաղաքացիները:

ՎՐԱՍՏԱՆՈՒՄ ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՄ «ՃԻՇՏ ԵՆ» ԲՈՒԺՈՒՄ



Առողջապահության համաշխարհային կազմակերպության ներկայացուցիչներն այցելել են Վրաստան եւ ուսումնասիրել կլինիկաների գործունեությունը:

ԱՅԿ-ի ներկայացուցիչները որբել մտահոգություն չեն հայտնել կորոնավիրուսի բուժման արձանագրության վերաբերյալ, որին հետևում են վրացական կլինիկաները, ասում են մասնագետները: Վերջին ժամանակներում սոցցանցերում Վրաստանի առողջապահական ոլորտը լայնորեն մեղադրվում է կորոնավիրուսով վարակված հիվանդներին ոչ ճիշտ բուժման մեջ՝ մատնացույց անելով մահացության ցուցանիշի զգալի աճը: Թբիլիսիի ինֆեկցիոն հիվանդանոցի Ցերցվածեն, սակայն, վստահ է, որ կորոնավիրուսի բուժման վրաստանյան մեթոդը եղել է ու կա աշխարհում լավագույններից մեկը, իսկ մահացության բարձր ցուցանիշը բացատրվում է վարակվածների չափազանց բարձր քանակով: - Ցավալի է կորցնել օրական 70-80 մարդ, սակայն պետք է հասկանալ, որ նրանք 70-80 հազար հիվանդներից են,- պարզաբանել է Ցերցվածեն: Վրաստանի կառավարության կողմից 2021 թվականի դեկտեմբերի 31-ին, իսկ մրցանակային գումարը կկազմի 100 000 լարի: Վիճակախաղի ընդհանուր մրցանակային ֆոնդը կազմում է 2 800 000 լարի: Վիճակախաղին կմասնակցեն մինչև 2021 թվականի սեպտեմբերի 13-ը պատվաստված քաղաքացիները, ինչպես նաև՝ 2021 թվականի սեպտեմբերի 13-ից հետո պատվաստված քաղաքացիները:

ԱՅԿ-ի ներկայացուցիչները որբել մտահոգություն չեն հայտնել կորոնավիրուսի բուժման արձանագրության վերաբերյալ, որին հետևում են վրացական կլինիկաները, ասում են մասնագետները: Վերջին ժամանակներում սոցցանցերում Վրաստանի առողջապահական ոլորտը լայնորեն մեղադրվում է կորոնավիրուսով վարակված հիվանդներին ոչ ճիշտ բուժման մեջ՝ մատնացույց անելով մահացության ցուցանիշի զգալի աճը: Թբիլիսիի ինֆեկցիոն հիվանդանոցի Ցերցվածեն, սակայն, վստահ է, որ կորոնավիրուսի բուժման վրաստանյան մեթոդը եղել է ու կա աշխարհում լավագույններից մեկը, իսկ մահացության բարձր ցուցանիշը բացատրվում է վարակվածների չափազանց բարձր քանակով: - Ցավալի է կորցնել օրական 70-80 մարդ, սակայն պետք է հասկանալ, որ նրանք 70-80 հազար հիվանդներից են,- պարզաբանել է Ցերցվածեն: Վրաստանի կառավարության կողմից 2021 թվականի դեկտեմբերի 31-ին, իսկ մրցանակային գումարը կկազմի 100 000 լարի: Վիճակախաղի ընդհանուր մրցանակային ֆոնդը կազմում է 2 800 000 լարի: Վիճակախաղին կմասնակցեն մինչև 2021 թվականի սեպտեմբերի 13-ը պատվաստված քաղաքացիները, ինչպես նաև՝ 2021 թվականի սեպտեմբերի 13-ից հետո պատվաստված քաղաքացիները:

ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՄ. ԱՇԽԱՐՀՈՒՄ ՎԱՐԱԿԱՍՏՆԵՐԻ ԹԻՎԸ ՄՈՏԵՆՈՒՄ Ե 228 ՄԻԼԻՈՆԻՆ

COVID-19-ի հաստատված դեպքերի թիվն աշխարհում հասել է 227 855 199-ի: Կորոնավիրուսի հետազոտական կենտրոնների տվյալների համաձայն, մահացածների թիվը գերազանցել է 4 684 449-ը: Ապաքինվել է 204 546 466 մարդ:



Վարակվածների թվով աշխարհում առաջին տեղում ԱՄՆ-ն է, որտեղ կա հաստատված 42 634 054 դեպք: Այստեղ մահացածների թիվը 688 486 է, երկրորդ տեղում Հնդկաստանն է, որտեղ հաստատված դեպքերի թիվը հասել է 33 381 728-ի, մահացածների թիվը՝ 444 278-ի:

Վարակվածների թվով հաջորդ տեղում Բրազիլիան է: Այստեղ վարակվել է 21 069 017, մահացել՝ 589 277 մարդ: Մեծ Բրիտանիայում կորոնավիրուսով վարակվել է 7 339 009, վարակի հետեւանքով մահացել՝ 134 805 մարդ: Մեծ Բրիտանիային հաջորդում են Ռուսաստանը, Ֆրանսիան, Թուրքիան, Իրանը, Արգենտինան ու Կոլումբիան:

Հայաստանում, ընդհանուր առմամբ, վարակվածների թիվը հասնում է 252 082-ի, մահացածներինը՝ 5 101-ի, ապաքինվածներինը՝ 235 030-ի:

Աղբյուրներում վարակվածների թիվը 467 173 է: Վարակից մահացել է 6 227, ապաքինվել՝ 423 705 մարդ:

Վրաստանում, վերջին տվյալներով, վարակվել է 5991 766, մահացել՝ 8 446, ապաքինվել՝ 556 810 մարդ:

Սեպտեմբերի 17-ին կորոնավիրուսով վարակման 2 039 նոր դեպքերից 716-ը Թբիլիսիում է, Աջարիայում՝ 128, Իմերեթիում՝ 321, Քվեմո Քարթլիում՝ 135, Շիդա Քարթլիում՝ 104, Գուրիայում՝ 63, Սամեգրելո-Չեմո Սվանեթիում՝ 192, Կախեթիում՝ 263, Մցխեթա-Մթիանեթիում՝ 60, Ռաճա-Լեչխումիում էւ Քվեմո Սվանեթիում՝ 19, Սամցխե-Ջավախեթիում՝ 38:

Այսօրվա դրությամբ, մահացել է 56 մարդ:

ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՄԻ ԲԱՑԱՐԱՅՏՄԱՆ ԴՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑՈՒՑԱՆԻՇԸ 7,2 ՏՈՒՆՈՍ Ե

Կառավարության stopcov.ge հատուկ կայքում հրապարակած տեղեկատվության համաձայն, Վրաստանում կորոնավիրուսի բացահայտման դրականության ցուցանիշը վերջին 7 օրում կազմել է 7,2 տոկոս:

Այս մասին նշված է կառավարության հատուկ կայք-էջում: Դրականության սեպտեմբերի 17-ի ցուցանիշը 6,47 տոկոս է, իսկ վերջին 14 օրվանը՝ 7,31 տոկոս:

ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 13-ԻՑ ՄԵԿԱՐԿԵՑ ՊԱՏՎԱՍՏՈՒՄՆԵՐԻ ԽԹԱՆՄԱՆ ՎԻՃԱԿԱՒԱՂԸ

ԱՄԱԼՔԱՄՔԻԻՅ ԵՎ ՆԻՆՈՍԻՆՂԱՅԻՅ ՊԱՏՎԱՍՏՎԱՍՏՆԵՐԸ ՇԱՀԵՅԻՆ 100-ԱԿԱՆ ԼԱՐԻ

Սեպտեմբերի 13-ին մեկնարկեց պատվաստված անձանց խրախուսման «Պատվաստվի՛ր եւ շահի՛ր» վիճակախաղը, որի համար հատկացված ընդհանուր գումարը կազմում է 2 800 000 լարի:



Վիճակախաղի գումարները կհատկացվեն բյուջեից եւ վիճակախաղին կարող է մասնակցել Վրաստանի այն քաղաքացիները, ովքեր գոնե մեկ անգամ պատվաստվել են: Խաղարկությունը կլինի ամենօրյա, շաբաթական եւ ամփոփիչ: Ամենօրյա խաղարկությունում շահարկվում է 100 եւ 500 լարի: Ինչ վերաբերում է շաբաթական խաղարկությանը, ապա՝ խաղարկվելու է 1 000-ից 10 000 լարի: Եզրափակիչ խաղարկությունը կանցկացվի 2021 թվականի դեկտեմբերի 31-ին, իսկ մրցանակային գումարը կկազմի 100 000 լարի: Վիճակախաղի ընդհանուր մրցանակային ֆոնդը կազմում է 2 800 000 լարի: Վիճակախաղին կմասնակցեն մինչև 2021 թվականի սեպտեմբերի 13-ը պատվաստված քաղաքացիները, ինչպես նաև՝ 2021 թվականի սեպտեմբերի 13-ից հետո պատվաստված քաղաքացիները:

Վիճակախաղի ամփոփիչ խաղարկությունը կանցկացվի ուղիղ եթերում, բոլոր խաղացողների տոմսերը կտեղադրվեն տուփի մեջ, եւ վիճակախաղի մասնակիցը կբացահայտի մեկ հաղթողը: Նշենք, որ սեպտեմբերի 15-ին շահողների ցուցակում Ախալքալաքից եւ Նինոծմինդայից մեկ անգամ պատվաստվածները շահել են 100-ական լարի:

Վիճակախաղի ամփոփիչ խաղարկությունը կանցկացվի ուղիղ եթերում, բոլոր խաղացողների տոմսերը կտեղադրվեն տուփի մեջ, եւ վիճակախաղի մասնակիցը կբացահայտի մեկ հաղթողը: Նշենք, որ սեպտեմբերի 15-ին շահողների ցուցակում Ախալքալաքից եւ Նինոծմինդայից մեկ անգամ պատվաստվածները շահել են 100-ական լարի:

ՀԱՅԱՍՏԱՆ - ԱՐՅԱԽ. Փաստեր, իրադարձություններ

«ՎՐԱՍՏԱՆԻ», ԱՐՄԵՆՊԵՏԻ, ՊԱՆԱՐՄԵՆԻԱՆԻ ԵՎ ԿԱՎԿԱԶՊԵՏԻ ՆՅՈՒԹԵՐՈՎ

ՀԱՅԱՍՏԱՆԸ ՍՏԱՆՁՆԵՑ ՀԱՊԿ-Ի ՆԱԽԱԳԱՐՈՒԹՅՈՒՆԸ



Սեպտեմբերի 16-ին աշխատանքային այցով Տաջիկստանում գտնվող Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանը մասնակցեց Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպության (ՀԱՊԿ) ընդլայնված նիստին:

Արտաքին գործերի նախարար Արարատ Միրզոյանը:

Օրակարգով նախատեսված հարցերի քննարկումից, համապատասխան

Հայաստանի վարչապետի հետ միասին ընդլայնված նիստին հայկական կողմից մասնակցում էին նաև Անվտանգության խորհրդի քարտուղար Արմեն Գրիգորյանը, Պաշտպանության նախարար Արշակ Կարապետյանը և

որոշումների ընդունումից հետո, Տաջիկստանի նախագահ Էմոմալի Ռահմոնը, ՀԱՊԿ-ի նախագահությունը ստանձնելու կապակցությամբ, իր ելույթի անունից շնորհավորեց Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանին և մաղթեց արդյունավետ գործունեություն:

ՀԱՊԿ անդամ երկրների ԱԳ և Պաշտպանության նախարարների խորհուրդների և ՀԱՊԿ ԱԽ քարտուղարների կոմիտեի հաջորդ նիստերը նախատեսվում են անցկացնել Հայաստանում՝ 2022 թվականի առաջին կեսին:

Նշենք, որ սեպտեմբերի 17-ին վարչապետ Նիկոլ Փաշինյանը մասնակցեց նաև Շանհայի համագործակցության կազմակերպության և Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպության համատեղ նիստին:

ԹՈՒՐԿԻԱ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 30-ԱՄՅԱԿԻՆ ԵՎՐՈՎԱՏ ՇՈՒՆՎԱԿՆԵՐ



Հայաստանի կենտրոնական բանկը թողարկել է Հայաստանի Հանրապետության 30-ամյակին նվիրված հուշադրամ: Հուշադրամի դիմերեսը՝ Հայաստանի զինանշանը՝ հավերժության նշանի ֆոնին է: Դարձերեսը՝ ոճավորված եռագույնը, զարդանախշ և 30-ամյակ մակագրություն է: Լսնալիքների հեղինակներն են Հարություն Սամուելյանը, Վարդան Վարդանյանը: Հուշադրամը հատվել է Լիպվայի դրամահատարանում: Տեխնիկական չափանիշներն են՝ անվանական արժեքը 5000 դրամ, մետաղը/հարզը՝ արծաթ 9250, քաշը՝ 168,1 գ. թողարկման քանակը՝ 300 հազ: Հուշադրամները թանկարժեք մետաղներից պատրաստված դրամներ են, որոնք թողարկվում են երկրի ազգային, միջազգային, պատմամշակութային, հոգեւոր և այլ արժեքները հասարակությանը ներկայացնելու, դրանք մետաղի տեսքով հավերժացնելու, ինչպես նաև դրամագիտական շուկայի պահանջարկը բավարարելու նպատակով:

ՊԵՏԱԿԱՆ ԲԱՐՁՐ ՊԱՐՔԵՎ՝ ԵՎՐՈՎԱՅՆ ԳԵՄՊԻՈՆ ԷԼԻՆԱ ՊԱՆԵԼՅԱՆԻՆ



Հայաստանի նախագահ Արմեն Սարգսյանի հրամանագրով շախմատիստուհի, միջազգային գրոսմայստեր Էլինա Դանիելյանը պարգևատրվել է Հայրենիքի մատուցած ծառայությունների համար 2-րդ աստիճանի շքանշանով՝ 2021 թվականին շախմատի եվրոպայի կանանց անհատական առաջնությունում տարած հաղթանակի, միջազգային ասպարեզում Հայաստանն ըստ արժանվուն ներկայացնելու համար: Հիշեցնենք, որ գրոսմայստեր Էլինա Դանիելյանը, վերջերս նվաճելով շախմատի եվրոպայի կանանց առաջնության չեմպիոնի տիտղոսը, նորանկախ Հայաստանի պատմության մեջ արձանագրել էր առաջին նմանատիպ հաջողությունը:

ՆԵՐԵՐԲՎԵՑ ՖՐԱՆՍԻԱՅԻ ՈՒՐԱՐՎԱՍՏ COVID-19 ՊԱՏՎԱՍՏԱՆՅՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՋԻՆ ԽՄԵՐԱՆՍԵԿԸ


Ֆրանսիայի կողմից ուղարկված «AstraZeneca» պատվաստանյութի 25 հազար դեղաչափ պարունակող առաջին խմբաքանակը սեպտեմբերի 14-ի առավոտյան հասել է Երեւանի Զվարթնոց միջազգային օդանավակայան: Հայաստանում Ֆրանսիայի դեսպանատան տեղեկատվությամբ, օդանավակայանում այն ընդունել են Հայաստանում Ֆրանսիայի դեսպանության գործերի ժամանակավոր հավատարմատար պարոն Քրիստոֆ Բալայանն ու Հայաստանի առողջապահության և Արտաքին գործերի նախարարությունների ներկայացուցիչները: «ՀՀ իշխանությունների հետ համակարգմամբ պատվաստանյութի մնացած առաքումները կշարունակվեն»,- նշված է դեսպանատան տարածած հաղորդագրության մեջ:

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ ՀԱՅ-ԻՐԱՆԱԿԱՆ ԲԱԶՄԱԿՈՂՄ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՐՅԵՐՆ ԷԻՆ

Սեպտեմբերի 17-ին, Տաջիկստանի մայրաքաղաք Դուշանբեում ՀԱՊԿ Հավաքական անվտանգության խորհրդի նիստի մասնակցից Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանը հանդիպում ունեցավ Իրանի նախագահ Երահիմ Ռահիսի հետ:

Հանդիպմանը կողմերը քննարկեցին հայ-իրանական բազմակողմ հարաբերությունների հետագա զարգացմանը, երկու երկրների միջեւ բեռնափոխադրումների անխափան կազմակերպմանը, տարածաշրջանում տեղի ունեցող գործընթացներին վերաբերող հարցեր:

Հանդիպմանը Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանը և Իրանի նախագահ Երահիմ Ռահիսի անդրադարձան երկկողմ հարաբերություններին և կարելի էր երկրների կառավարությունների ներդաշնակ գործելու հնարավորությունները:



Կու երկրների կառավարությունների ներդաշնակ գործելու հնարավորությունները:

ԵՎՐԱՄԻՈՒԹՅԱՆ ՀԱՏՈՒԿ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Սեպտեմբերի 13-ին Հայաստան ժամանեց Հարավային Կովկասի և Վրաստանի ճգնաժամի հարցերով ԵՄ հատուկ ներկայացուցիչ Տոյվո Կլարը:

Այցի շրջանակներում, Եվրամիության հատուկ ներկայացուցիչը հանդիպումներ ունեցավ Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանի, ԱԳ նախարար Արարատ Միրզոյանի հետ:

Հանդիպմանը Հայաստանի վարչապետը դիմադրեց գնահատեց Հայաստան-Եվրամիություն գործակցությունը, առանձնացնելով այս տարի հուլիսին՝ Եվրոպական խորհրդի նախագահի, Եվրոպական հանձնաժողովի հարեւանության և ընդլայնման հարցերով հանձնակատարի այցերը Հայաստան: Նրա խոսքով, Հայաստանի կառավարությունը աշխատում է այդ այցերի արդյունքներով Հայաստանին ԵՄ կողմից տրամադրված 2,6 մլրդ եվրո ֆինանսական փաթեթի առաջնահերթությունների վերջնականացման ուղղությամբ:

Եղավ ենթակառուցվածքների, առևտրատնտեսական, գործարար և այլ ոլորտներում կապերի զարգացման հեռանկարներին:

Հայաստանի վարչապետը և ԵՄ հատուկ ներկայացուցիչը մտքեր փոխանակեցին ԼՂ հակամարտության կարգավորման շուրջ: Երկուստեք ընդգծվեց ԵԱՀԿ Մինսկի խմբի համախառն հիմնադրամի շրջանակում բանակցությունների վերսկսման կարևորությունը:

Կողմերի անդրադարձան տարածաշրջանային նշանակության այլ հարցերի և, մտքեր փոխանակեցին տրանսպորտային հաղորդակցության ուղիների բացման շուրջ:

ՀԱՅԱՍՏԱՆԸ ՀՈՒՍՈՎ Է, ՈՐ ԳԱԶԻ ԳԻՆԸ ԱՆՓՈՓՈՒՄ ԿՄՆԱ

Սեպտեմբերի 14-ին Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանը հանդիպում ունեցավ «Գազպրոմ» բաժնետիրական ընկերության վարչության նախագահ Ալեքսեյ Միլլերի հետ:

Հանդիպմանը հյուրը Հայաստանի վարչապետին ներկայացրեց Հայաստանում «Գազպրոմ» բաժնետիրական ընկերության գործունեությունը, ընկերության ներդրումային և սոցիալական ծրագրերը՝ վստահեցնելով, որ «Գազպրոմ»-ը պատրաստ է շարունակել իրականացնել ընկերության առջև դրված բոլոր խնդիրները:

Ձրուցակիցները քննարկեցին էներգետիկայի ոլորտում հայ-ռուսական համագործակցության ընթացքը և զարգացման հեռանկարները, անդրադարձ եղավ «Գազպրոմ» բաժնետիրական ընկերության գործունեությանը վերաբերող հարցերին:

Երկուստեք կարելի էր Գազպրոմի կարգազանցումը, գազամատակարարման հուսալի համակարգի ձևավորման ուղղված շարունակական ծրագրերը:

Սեպտեմբերի 15-ին Հայաստանի փոխվարչապետ Սիեր Գրիգորյանը, ԱԺ-ում կառավարության անդամների հետ հարցուպատասխանին, անդրադառնալով «Գազպրոմ» բաժնետիրական ընկերության վարչության նախագահ Ալեքսեյ Միլլերի Հայաստան կատարած այցին, հայտարարեց՝ Հայաստանը հուսով է, որ այս տարի կհաջողվի սահմանին պահպանել գազի նույն գինը, մոտակա ժամանակահատվածում անսպասելի բան չի կանխատեսվում:

ՀԱՅԱՍՏԱՆԸ ԵՎ ԵՎՐՈՊՈՒԸ ՀԱՄԱԶԱՅՆԱԳԻՐ ԵՆ ՍՏՈՐԱԳՐԵԼ

Եվրոպայում և Հայաստանում սեպտեմբերի 16-ին ստորագրեցին ռազմավարական համագործակցության համաձայնագիր անդրադառնալով հանցագործությունների դեմ պայքարում համագործակցությունը ընդլայնելու վերաբերյալ: Այս մասին հայտնում է Եվրոպայի կայքը:

Տարածած հաղորդագրությունում նշված է, որ համաձայնագիրը գործընկերներին հնարավորություն կտա աշխատել մի շարք առանցքային ոլորտներում, ինչպիսիք են միգրանտների մաքսանցումները, կիբեռահանցավորությունը, թմրամիջոցների ապօրինի շրջանառությունը, փողերի լվացումը, գույքի կազմակերպված հանցավորությունը և մարդկանց թրաֆիքինգը:

Վարական և տեխնիկական տեղեկատվության փոխանակում, բացառությամբ՝ անձնական տվյալների:

Նշվում է, որ ռազմավարական համագործակցության մասին համաձայնագրի ստորագրմամբ եզրափակվում են Հայաստանի և Եվրոպայի միջեւ հաջող բանակցություններն այն թեմայով, թե ինչպես արդյունավետորեն միավորել ուժերը՝ լուրջ և կազմակերպված հանցավորության դեմ պայքարում:

Համաձայնագիրը թույլ է տալիս ընդհանուր ռազմավարական հետախուզության, ինչպես նաև ռազմա-

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ

ՍԵՊՏԵՄԲԵՐ



19.09.2021
Բարեկենդան
Վ ա Ր ա գ ա
Սուրբ Խաչին

Այս կիրակին
նախորդում է
պահքին, որը
նվիրված է Վարագա
լեռան վրա Սուրբ Խաչափայտի
մատուցած գոտեմունքին:

20.09.2021 Սիմեոն Այուճակյացի
հիշատակության օր

21.09.2021 Մեծ Վարդանի դատեր՝
Շուշանի հիշատակության օր

Սուրբ Շուշանը Վարդան Մամիկոնյանի
ավագ դուստրն էր, որին նախապես
Վարդանի էին կոչել, բայց հայոց
պատմության եւ վարքաբանության մեջ
հայտնի է Շուշան փաղաքական անունով:
Նա ամուսնացած էր վրաց Աշուշ
բողեշի որդի Վագգեմի հետ: Չնայած
նրանք 3 տղա եւ 1 աղջիկ ունեին, սակայն
ամուսինը, բողեշ դառնալով, կրոնափոխ
էր եղել եւ ամուսնացել պարսիկ Պերոզ
իշխանի զոքանջի հետ: Իսկ Շուշանը
եկեղեցուն կից մի փոքրիկ տնակում,
ապրում էր աղոթքներով՝ միշտ մերժելով
իր ամուսնու՝ դավաճանափոխ լինելու
առաջարկներն ու սպառնալիքները: Սբ.
Շուշանիկը 7 տարի անընդմեջ իր
ամուսնուց հալածվում է՝ ապավինելով միայն
իր աներեր հավատին առ Աստված եւ
պապից՝ Սբ. Սահակից իրեն կտակված
Ս. Ավետարանին: Սբ. Շուշանը 470
թվականին իր կյանքն ավարտում է
մարտիրոսական մահով: Ըստ Ռիտանես
պատմիչի՝ նրա գերեզմանը Ցուրտավում է:

25.09.2021 Սուրբ Գեորգ քաջամարտիկ
գործարարի, Աղոկոսի եւ Ռոմանոս
Երզնցողի հիշատակության օր

ՆՈՐԱԶԵՎՈՒԹՅՈՒՆ

ՎՐԱՑԱԿԱՆ SITUATIONIST
ԲՐԵՆԴՔ ՓԱՐԻՉՈՒՄ

Situationist
հայտնի վրացական
հագուստի բրենդը
երրորդ անգամ
անընդմեջ մասնակցելու է Փարիզում
կազմակերպվող Նորաձեւության
շաբաթին:



Նորաձեւության շաբաթը Փարիզում կանցկացվի
սեպտեմբերի 27-ից հոկտեմբերի 5-ը:

Ընդամենը շաբաթին կմասնակցի 92 բրենդ,
դրանցից 37-ը պլանավորում են ցուցադրություններ
անցկացնել առցանց ձեւաչափով: Իր հավաքածուն
կներկայացնի նաեւ վրացական ծագմամբ
աշխարհահռչակ հայտնի դիզայներ Դեմնա
Գվասալիան Balenciaga բրենդի համար:

Այսպիսով, դիզայներ Իրակլի Ռուսաձեւն իր
Situationist բրենդով արդեն երրորդ սեզոնն
անընդմեջ իր հավաքածուն սեպտեմբերի 29-ին
կներկայացնի նորաձեւության աշխարհում
կարելու անունների շարքում:

Situationist-ը առաջին անգամ նորաձեւության
խոշորագույն եւ կարելուագույն իրադարձություններից
մեկի պաշտոնական օրացույցում է հայտնվել
2020 թվականին:

Այդ ժամանակ դիզայներ Իրակլի Ռուսաձեւն
անցկացրեց 2021 թվականի գարուն-ամառ իր
նոր հավաքածուի ցուցադրությունը: Երկրորդ
անգամ, երբ բրենդը ներկայացվեց Փարիզում,
տեղի ունեցավ 2021 թվականին, երբ դիզայները
ցուցադրեց աշուն-ձմեռ հավաքածուն:

Situationist բրենդը ստեղծվել է դիզայներներ
Իրակլի Ռուսաձեւի եւ Դավիդ Գիորգաձեւի կողմից,
2015 թվականին: Վրաց դիզայներների գործերն
օգտագործել է ամերիկացի մոդել Բելա Չադիդը,
որը քանիցս հանրությանը ներկայացել է Situationist-ի
հազուստներով, ինչպես նաեւ Քիմ Քարդաշյանը
եւ ուրիշներ:

ՄԱՅՐԱՔԱՂԱՔ

ՆՈՐ ԱՎՏՈՐՈՒՄՆԵՐԻ ԹԲԻԼԻՍԻ ՓՈՂՈՑՆԵՐՈՒՄ

Թբիլիսիի քաղաքապետ Կախա Կալաձեւն
հայտարարեց, որ, Թբիլիսիի հասարակական
տրանսպորտի աշխատանքի արդյունավետության
մեծացման նպատակով, քաղաքապետարանի
նախաձեռնությամբ լրացուցիչ կզմվեն 380
նոր ավտոբուսներ, որոնցից 180-ը՝ ութ
մետրանոց, իսկ 200-ը՝ 18 մետրանոց է:

Թբիլիսիի քաղաքապետի խոսքով, ութ
մետրանոց ավտոբուսի 180 միավորից 20-ն
արդեն ներկրվել է Թբիլիսի եւ սեպտեմբերի
22-ից գործարկվելու է:

Սենք սկսել ենք նաեւ միկրոավտոբուսների
նորացման-փոխարինման ծրագիրը, եւ մինչեւ
տարեվերջ երթուղային տաքսիներն
ամբողջությամբ կփոխարինվեն, ոչ մի դեղին
միկրոավտոբուս չի երթել եւ քաղաքում: Այսօրվա
դրությամբ, ներկրվել է 90 նոր միկրոավտոբուս
եւ կսկսի գործել սեպտեմբերի 22-ից: Դուրս
գիտեք, որ ցանցը նույնպես ամբողջովին
արդիակա-

նացվում է, որպեսզի մենք չթողնենք ոչ
մի փողոց, թաղամաս, որտեղ հասարակական
տրանսպորտը չի անցնում: Հասարակական
տրանսպորտը պետք է հասանելի լինի բոլորին,
այն պետք է լինի հարմարավետ բոլորի
համար եւ պետք է ազատ տեղաշարժվի
քաղաքում՝ առանց որեւէ խոչընդոտի: Կարելու
է նաեւ երթուղային կազմակերպումը, ինչը
մենք անում եւ իրականացնում ենք զուգահեռաբար:
Սա կշարունակվի ապագայում էլ, եւ կլինի
առաջիկա տարիներին ամենակարեւոր
թեմաներից մեկը,- ասաց Կախա Կալաձեւն:

ՄՆԱԿԱՄԹԵՐՔԻ ԲԱԺԱՆՈՒՄ ԹԲԻԼԻՍԻ
ՄԱՆԿԱԳԱՐՏԵԶՆԵՐՈՒՄ

Թբիլիսիի մանկապարտեզներում սկսվել է
երեխաների համար սննդամթերքի բաժանումը:

Ինչպես նշեց մանկապարտեզների կառավարման
գործակալության պետ Կախաբեկ Գվանցելաձեւն,
մանկապարտեզներում սննդամթերքի տրամադրումն
իրականացվում է կովիդ-կանոնակարգերի
լիակատար համապատասխանությամբ:

Նրա խոսքով, սնունդը կտրամադրվի նաեւ
նորակառույց մանկապարտեզների երեխաներին,
որոնք նախատեսվում են դաստիարակչական
գործընթացի վերսկսման ժամանակ բացել:

Նշենք, որ Թբիլիսիի քաղաքապետ Կախա
Կալաձեւի որոշմամբ, գործակալությունը
թարմացրել է սոցիալական նախագիծը, որի
շրջանակներում 10

ապրանքատեսակների փաթեթները բաժանվում
են սննդամթերք ստանալից ցանկացող
երեխաների ընտանիքներին, եւ այդպիսի 50
հազար երեխա կա:

Սոցիալական նախագիծը, որի շրջանակում
երեխաների համար նախատեսված սննդամթերքը
կփոխանցվի երեխաների ընտանիքներին ուսումնական
գործընթացի դադարեցման պայմաններում,
իրականացվում է 2020 թվականի մարտից՝
Թբիլիսիի քաղաքապետ Կախա Կալաձեւի
նախաձեռնությամբ: Նոր տվյալներով Թբիլիսիում
հաշվառված է 188 մանկապարտեզ եւ 61 000
երեխա:

Քաղաքապետարանի մանլո ծառայություն

Table with 6 columns and 10 rows containing numbers 1 through 58.

Խ Ա Չ Բ Ա Ռ

ՀՈՐԻՉՈՆԱԿԱՆ. 7.Համամիտ: 9.Երկմերանգ: 10.Երկրորդ
նախաճաշ: 11.Քաղաք Չեխիայում: 13.Ծառաբիսիային
բուսականության գերակշռությամբ կենսաբանական
բազմազանության ամբողջություն: 16.Հացահատիկի
ծեծելու վայրը: 17.Հայ ճարտարապետ, ակադեմիկոս ...
Թորոյան: 19.Առանց խոհերի: 22.Ռուս մարմնամարզուհի ...
Կաբաբեա: 24.Աֆրիկական երկիր: 25.Նա: 27.Բույս, որի
սերմից եթերայուղ է ստացվում: 29.Հավասարակշռությունը
պահպանող ծանրություն մակերի մեջ: 32.Նահանգ
ԱՄՆ-ում: 33.Արիստոսական կաուչուկ արտադրող
գործարան Երեւանում: 35.Թունավոր խոշոր օձ: 37.Երկկճղակավոր
կենդանի: 39.Իտալացի բանաստեղծ ... Ալիգիերի: 40.Ֆրանսիական
ավտոմեքենա: 43.Ամերիկահայ մոդել եւ դերասանուհի ...
Քարոլայան: 44.Չիու մեջքին դրվող նստելու հարմարանք:
47.Զապորոժյան ...: 49.Վրացի գրող ... Գելաշվիլի: 50.Գետ
Հայաստանում եւ ԼՂՀ-ում: 53.Հնձած հացաբլուսի կապուկ:
54.Աչքի վերելում: 55.Վեզի՝ ճանի կեռնանաձեւ փոստրակով
երեսը: 57.Մեկ ուրիշ: 58.Քիմիական տարր: ՈՐՈՂԱՅՈՅՆՆԵՐ.
1.Քարծրակրունկ սրաքիթ ոտնաման: 2.Շաղակրատել:
3.Ուսումնական հաստատություն: 4.Արեւմտահայ գրող,
ով ստեղծագործել է հիմնականում ֆրանսերեն Վահե ...:
5.Հայ կոմպոզիտոր ... Տերտերյան: 6.Տարվա եղանակ:
8.Լեռնագագաթ Այուդիքի մարզում, Բարգուշատի
լեռնահամակարգում: 12.Ծով Ինդոնեզիայում: 14.Միտքը
ծուռ, ստոր: 15.Միասին լծվող լծկաններից յուրաքանչյուրը,
լծակից: 18.Վրաստանի պրոֆեսիոնալ վոկալ արվեստի
հիմնադիրներից ... Սարաջիշվիլի: 19.Ազնիվ, չխաբող:
20.Խարդախ: 21.... ու համերաշխ: 23.Մոլորվական
ֆուտբոլի թիմ: 26.Քնահարան: 28.Երաժշտական
ստեղծագործության կատարումը երաժշտական
գործիքով: 29.Գերմանացի կոմպոզիտոր Յոհան
Սեբաստիան ...: 30.Կեղտի հետք: 31.Իրանական
բանակի զենքեր: 34.Ռեժիսոր ... Բերգման: 36.Դերասանի
«ամբոյնը»: 38.XII դարի պալատ-ամրոց Ֆրանսիայում:
41.Կազակ հրամանատար: 42.Հավասար հաշիվ:
45.Հովհաննես Թումանյանի պոեմներից: 46.Տարիքով
մարդ (ժող): 48.Աջարիայի բնակիչ: 51.Գետ
Ղազախստանում: 52.Կիսաբեկ: 56.Խմբական տեղափոխություն
մի վայրից մի ուրիշը: Կազմեց ԷԼԼԱ ԱՍԻՍԵՎԱՆԸ

ՆԱԽՈՐԴ ՀԱՄԱՐԻ ԽԱՉՔԱՌԻ ՊՍՏԱՍԻՄԱՆՆԵՐԸ

ՀՈՐԻՉՈՆԱԿԱՆ. 1.Խորեն: 5.Կարդավառ: 11.Լաչակ: 13.Ալիսա: 14.Աղա: 15.Կարեն: 17.Թագ: 19.Սարգս:
20.Ատր: 21.Դաքար: 23.Թարս: 25.Արարող: 29.Բակլա: 31.Կտավատ: 33.Կամերտոն: 34.Բոսնիա: 35.Իզարա:
36.Խա: 37.Բարի: 39.Նու: 40.Մաս: 42.Առաքել: 44.Մանե: 45.Որակ: 48.Վանել: 49.Եզր: 50.Սիլիան: 53.Լա: 54.Մարկ:
57.Ալվան: 60.Իտ: 61.Ար: 62.Լիանա: 63.Կորբա: 64.Ամեն: ՈՐՈՂԱՅՈՅՆՆԵՐ. 2.Ոճիր: 3.Ելակ: 4.Նա: 5.Վաղես:
6.Ալանապատ: 7.Դանթե: 8.Վոլգա: 9.Որբերու: 21.Դրամա: 22.Երասխ: 24.Աբաս: 26.Ղաբուլի: 28.Ուսումնական:
30.Լրաբեր: 31.Կնճի: 32.Մարտի: 33.Կիսատ: 38.Ալաստան: 41.Անեզր: 43.Քորեյի: 44.Մարմարա: 46.Կի: 47.Վալիկո:
51.Նատո: 52.Նանի: 55.Արամ: 56.Կանն: 57.Ալի: 58.Վան: 59.Նավ:

Գլխավոր խմբագիր՝ ՎԱՆ ԲԱՅԲՈՒՐԹՅԱՆ
Գլխ. խմբագրի տեղակալ՝ ՅՈՒՐԻ ՊՈՂՈՍՅԱՆ
Համարի պատասխանատու՝ ԳԱՅԱՆԵ ԲՈՍՏԱՆՉՅԱՆ
Համակարգչային ձեւավորումը՝ ՏԻԳՐԱՆ ՍԻՐԱԴԵՂՅԱՆ

ՔՅՅԵՈ ՅՈՆՁՅՅԵՄՈ: ՄՁՁԸՈՆՈ 0105, Ճ.ՅՄՈՂԵՅԸՈՆ ՄՅՅԵՃ 5,
Մեր հասցեն՝ Թբիլիսի 0105 Գ.Աթոնելի փ. 5
ՃՅԸ. Հեռ. 2990-739, 2990-774
www.vrastan.ge E-mail: vrastan.press@gmail.com
Գրանցման վկայական № 4 Կ - 1439
«ԿՈՂՈՐ» հրատարակչություն

«ՅՁՁԵՄՈ»
ՄՁՁԸՈՆՈ, ՆՅՅՅԵՄՅԸՈՐ
«ՅՐԱՏԱՆ»
Тбилиси, Грузия
«VRASTAN»
Georgia, Tbilisi
Индекс 66445